

5.2. Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի ամփոփ արդյունքները

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3213.0 հազ. մարդ, որից 2066.1 հազ-ը կամ 64.3%-ը հանդիսանում են քաղաքային բնակչություն, իսկ 1146.9 հազ.-ը կամ 35.7%-ը բնակվում են գյուղական վայրերում: ՀՀ առկա բնակչության թվաքանակը կազմել է 3002.6 հազ. մարդ, որից 1945.5 հազ.՝ քաղաքային, իսկ 1057.1 հազ.՝ գյուղական բնակչություն է: ՀՀ մշտական բնակչության խտությունը 1քառ.կմ-ի վրա կազմել է 108 մարդ:

Հանրապետության բնակչության ավելի քան 1/3-ը, իսկ քաղաքային բնակչության 53.4%-ը կենտրոնացված է հանրապետության մայրաքաղաքում՝ Երևանում, որի մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 1103.5 հազ.մարդ, իսկ առկա բնակչության թվաքանակը կազմել է 1091.2 հազ.մարդ: Երևան քաղաքի մշտական բնակչության խտությունը 1 քառ.կմ-ի վրա կազմել է 4861 մարդ:

Մարդահամարի արդյունքներով, մշտական բնակչությունից 1542.0 հազ. կազմել են տղամարդիկ, իսկ 1671.0 հազ.՝ կանայք: Հանրապետության 1000 տղամարդուն բաժին է ընկել 1084 կին: Ընդ որում, կանանց թվաքանակի գերազանցումը տղամարդկանց թվաքանակին սկսվում է 20 տարեկանների տարիքային խմբից միայն: Հանրապետության աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը (16-62 տարեկան տղամարդիկ, 16-58 տարեկան կանայք) կազմել է 1935.0 հազ.մարդ, կամ մշտական բնակչության 60.2%-ը, աշխատունակ տարիքից ցածր բնակչության թվաքանակը՝ 845.9 հազ.մարդ կամ 26.3%-ը և աշխատունակ տարիքից բարձր բնակչությանը՝ 432.1 հազ. կամ 13.5 %-ը:

Հանրապետության բնակչության կրթական մակարդակը բնութագրվել է հետևյալ կերպ՝ 15 և բարձր տարիքի 1000 բնակչից 170-ը ունեն բարձրագույն և բարձր (հետբուհական և գիտական աստիճան), 198-ը՝ թերի բարձրագույն և միջին մասնագիտական, 420-ը՝ նախնական մասնագիտական և ընդհանուր միջնակարգ, 133-ը՝ ընդհանուր հիմնական և 62-ը՝ ընդհանուր տարրական կրթական մակարդակ: 15 և բարձր տարիքի բնակչության թվաքանակից 41.6 հազ.մարդ չի ունեցել տարրական կրթություն, որոնց 35.1%-ը, կամ 15 և բարձր տարիքի բնակչության 0.6 %-ը տառաճանաչ չէ, ընդ որում նրանց գերակշռող մասը բաժին է ընկել 50 և բարձր տարիքի անձանց:

Հանրապետության 15 և բարձր տարիքի 1000 բնակչից 621 ամուսնացած են (գրանցված և փաստացի) 264-ը՝ երբեք ամուսնացած չեն եղել, 85-ը՝ այրի(կնակորույս) են, իսկ 30-ը՝ ամուսնալուծված են (գրանցված և փաստացի): Ընդ որում, կանանց թվաքանակը, ովքեր նշել են ամուսնացած լինելու մասին, գերազանցում է ամուսնացած տղամարդկանց թվաքանակին (31.8 հազ.):

Հանրապետության բնակչության բաշխումն ըստ ազգային կազմի

(հազ.մարդ)

Ընդամենը	այդ թվում ըստ ազգության							
	հայեր	ասորիներ	եզդիներ	հույներ	ռուսներ	ուկրաի- նացիներ	քրդեր	այլ
3213.0	3145.4	3.4	40.6	1.2	14.7	1.6	1.5	4.6

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով մշտական բնակչության 99.1 %-ը կամ 3185.5 հազ.մարդ, հանդիսացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, 0.4%-ը նշել է քաղաքացիություն չունենալու մասին, 0.2 %-ը՝ Ռուսաստանի Դաշնության, 0.1 %-ը՝ Վրաստանի, իսկ մնացյալը նշել են այլ երկրների քաղաքացիություն ունենալու մասին:

Մարդահամարի արդյունքներով տեղեկատվություն է ստացվել նաև բնակչության գոյության միջոցների հիմնական աղբյուրի վերաբերյալ: Բնակչության 29.3%-ի կողմից որպես գոյության միջոցների հիմնական աղբյուր նշվել է աշխատանքը, ներառյալ անձնական օժանդակ տնտեսությունում, 16.6%-ը՝ կենսաթոշակը, կրթաթոշակը, նպաստը (բացի գործազրկության), ինչպես նաև պետական ապահովությունը, 0.4%-ը՝ գործազրկության նպաստը, 9.7%-ը՝ գոյության միջոցների այլ աղբյուրներ (եկամուտ սեփականությունից, դրամական օգնություն և այլ): Բնակչության 44 %-ի գոյության միջոցների հիմնական աղբյուր է հանդիսացել այլ անձանց խնամքը, ընդ որում խնամքի տակ գտնվողների գերակշռող մասը (78.5 %) կազմել են մինչև 25 տարեկան երեխաներն ու երիտասարդները:

Հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ մարդահամարի հաշվառման պահը (2001թ. հոկտեմբերի 10-ը) նախորդող շաբաթվա ընթացքում, կազմել է 15 և բարձր տարիքի բնակչության 65.4 %-ը (կամ 1591.3 հազ.մարդ), որի 35.9%-ը գործազուրկներն են՝ այսինքն այն անձինք, ովքեր մարդահամարի հաշվառման պահը նախորդող շաբաթում չեն աշխատել, ակտիվ զբաղվել են աշխատանք փնտրելով և պատրաստ են եղել առաջիկա երկու շաբաթվա ընթացքում անցնել աշխատանքի (Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանմամբ): Հանրապետության զբաղված բնակչության 41.7 %-ը զբաղված է եղել վարձու աշխատանքով, 9.7 %-ը՝ անհատ ձեռնարկատերեր և ինքնազբաղվածներ են եղել, 25.4 %-ը՝ գյուղացիական տնտեսության անդամներ են եղել, 0.7 %-ը՝ գործատուներ և կոոպերատիվի (արտադրական) անդամներ, իսկ 4.1%-ը՝ ունեցել են զբաղվածության այլ կարգավիճակ: Զբաղվածների 18.4%-ի կամ 187.6 հազ. մարդ չի նշել զբաղվածության կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացվել է վերոհիշյալ և բնակչության ու տնային տնտեսությունների բնակչության պայմանների վերաբերյալ լայնածավալ տեղեկատվություն, որը կներկայացվի սպառողներին 12 հրապարակումներով՝ հանրապետության, Երևան քաղաքի և 10 մարզերի համար: «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքների» եռալեզու հրապարակումն արդեն իսկ տեղադրված է ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում 2004թ. հունվարի 21-ից: